ք. Երևան 12.08.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ № 1

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

տնօրեն Սուրեն Նազինյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3» ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն 3-րդ, 12-րդ, 18-րդ, 19-րդ, 32-րդ և 48-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսացել Լևոն Ստեփանի Կիրակոսյանը, որը հանդիսանում է փոխկապակցված անձ «Մաան» ՍՊ ընկերության համար, այն է՝ նույն ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում 2022 թվականի հուլիսի 8-ից սկսած՝ համաձայն պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Միաժամանակ, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.13 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա ՀՀ լիազոր մարմինը (այսուհետ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, եթե Ընկերությունը չի վճարում համապատասխան գրությամբ ներկայացված տուժանքները:

Ուսումնասիրելով Օրենք 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները և հիմք ընդունելով «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3» ընթացակարգի սահմանված պատասխանատու ստորաբաժան-ման կողմից 11.07.2024 թվականի զեկուցագրով «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով ներկայացված փաստերը, ինչպես նաև այն հանգամանքը, որի համաձայն՝ ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) տնօրենի կողմից 17.07.2024թ. «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին ուղղված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցմամբ և 18.07.2024 թվականին որակավորման ու պայմանագրի ապահովման վճարման ծանուցումների ներկայացմամբ Ընկերության կողմից տույժերի ու տուգանքներին վճարումներ չեն իրականացվել՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:
2. «Մ.Ա.Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր կերպով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ.անձի դեպքում հանրային ծառայության համարանիշ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառվելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիր
			Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Մ.Ա.Կիրակոսյաններ>> ՍՊԸ	ՀՎՀՀ 02890282	Ք.Երևան, Դեղատան փ., 10շ., 6 բն.	Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը	-	-	Տնօրենի 12.08.2024թ. կայացրած որոշում և գնման ընթացակարգի ծածկագիր՝ ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Дата: 2024.08.12 15:13:55 AMT

Ս. ՆԱԶԻՆՅԱՆ